


ԲԱՏԱՆՆԵՐ ԱՊՐՈՒԹԻՒՆ
 Պոլիպոլիտիկ համար
 Տարեկան 12 ծր.
 Վեցամսեայ 6 »
 Արտատպանի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ծր.
 Վեցամսեայ 1:50 »
 ԿԱՆԻՍԿ ԿՐԻՍՏԻՆ

Իրանացիական ճոյր ստորագրողներին հրահանգում են համար 40-ը ստորագրել և իսկ վերջին համարի համար 20 սակարկել և համար 40-ը ստորագրողներին համար 20 ՍԱՆԻՍԿ ԿՐԻՍՏԻՆ

Վառնայի համար ձեռքի 10 սակարկել



Կանակ էլ ցրաւ դրկեց
 Խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ

«Чаржумъ»

Вѣстникъ

du journal

«Charjourn»

Varna (Bulgarie)

Գրութիւնք ևս չեն տրուի

Արտատպանի ձեռքի

(20 ՍԱՆԻՍԿ)

Պոլիպոլիտիկ համար ձեռքի

15 ՍԱՆԻՍԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳԻՎԱԿԱՆ

ԿՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՔԻ ՕՐԵՐԸ

Տ Օ Ք Թ Մ Վ Ա Ր Գ Ա Ն Ե Ա Ն

Մանկարարն էլ մասնագետ կանանց, ազայոց և ծննդական գործարանաց հիանդու թեանց:

Փոխադրած է իւր բնակարանը Մուսալլա Աճէմի սրճարանի փողոցը, բողոքականաց ժողովարանին դէմի տունը:

ԿՐԿԻՆ ՄԻ ՀԱՅ ԼՐՏԵՍ

Անշուշտ մեր ընթերցողները յիշում են անցեալները մեր հազարամյա լուրջ թէ՛ ֆրանսական կառավարութիւնը Պարիզից թրքական լրտեսների մի խումբ է արտաքսել իր զեկավարովը միասին, որը, դժբախտաբար, կրկին հայ է եղել:

Բաւական ժամանակ էր որ էլ հայ լրտեսի, մանաւանդ այդպիսի կարեւոր պաշտօն ստանձնող լրտեսի անուն չէր լսուում: Հին լրտեսները բարձր էլ կարծես վարկաբեկ էին եղել Սուլթանի աչքում: այդ պատճառով էր որ հայը զաղարկել է վստահելի լրտես լինելուց: Բայց հինի տեղը նորերն են բուսնում: Բիւրեւելեաններին յաջորդում են Սինապեանները:

Ստրկական ազտութեանը այնքան ստորացրել է թրքական շրջանների մօտիկ հայութիւնը, որ նա շարունակ, ինչպէս երեւում է, իր ծոցից կարող է լրտեսներ, դաւաճաններ արտադրել:

Ինչ էք կարծում, արգեօք մինչեւ ֆրանսական կառավարութեան յայտարարութիւնը, Սինապեանը Պարիզում Հայկական շրջանակներին մէջ չէ՞ր սլքտում, նոյնիսկ ազգաբնակչութեանը թէրեւս այդ բոլորն էլ կատարել է պարոն Սինապեանը: չէ՞ որ լրտես է եղել իսկ լրտեսի պարտականութիւնն ի՞նչ է: մտնել ամեն ծակու ծակ, ամէն դիմակ հագնել, և իրենց առջեւ ոսկոր նետող աէրին սեղեկութիւններ հազարգել:

Այդ մասին Պարիզում ապրող հայ երիտասարդութիւնից ոչ մի բան չը լսվեց. նոյնիսկ մարդիկ չը գտնվեցին ֆրանսական մամուլի մէջ պատարակելու այդ ցածահոգի հային, որը իր պաշտօնով արատ էր բերում հայ անունը այն ժամանակ, երբ ֆրանսական հասարակութիւնը և մամուլը հայերովս են զբաղված: Պարիզի հայ երիտասարդութիւնը հէնց այդ սեղ, Պարիզում պէտք էր քարկոծէր այդ ցած արարածին, իր զգուշացր յայտնելու համար դէպի հայ ժողովրդի այն անարժան զաւակները, որոնք ընդունակ են լրտեսութիւն յանձն առնելու: Բայց ո՞ր է մեր մէջ այդքան նրբին ազգային պատուախնդրութեան և ինքնաճանաչութեան զգայմունք:

ՎԱՐԳՕ

ԹՈՒՐՔԻԱ

Կրտսն թէ՛ Սուլթանը ականջները շատ կախեր է. գործերը գէշ կերթան. Թրանսայի հետ ունեցած ընդհարումը շատ կանհանգստացնէ զինքը. Պոլսոյ մէջ կը խօսուի թէ՛ Չարին ճամբորդութեանէն վերջը Թրանսա զորաւոր նաւորմիդ մը պիտի զրկէ, որու նպատակը պիտի ըլլայ կամ Զմիւռնիան, կամ թէ Սելանիքը գրաւել, մինչև որ իր պահանջներուն բաւարարութիւն տրուի: Սուլթանը իր բոլոր ճիգերը կը թախէ Թրանսական նաւատորմի շրջանին հաճելի այցելութեանէն խուսափել, որովհետեւ այդ նշանաւոր նաւահանգիստներէն միոյն գրաւումը իր վարկը բոլորովին պիտի կտրէ մահմետականներուն առջեւ:

Միւս կողմէն ալ ռուսական զեռպանը կսպառնայ մնացած պարտքը և Հին Սերայի մէջ խաղաղութեան վերականգնումը պահանջելով: Սուլթանը զօրք զրկած է Իսթաթ Ալպանիա անափուտները զսպելու համար,

որպէս զի նոր փորձանք մը չի բերեն զլիսուն:

Աւստրո-Հունգարիան ալ մէկ կողմէն Սուլթանին օժիքէն բռններ է. ձերուսի գեռպան Բալիչէն կը պահանջէ որ Բրիտանիա աւստրիական ներկայացուցչին վրայ սպաննութեան փորձ ընողները ձերբակալուին և պատժուին: Սակայն դիւրին է զանոնք բռնել. նախ որ փախած են, երկրորդ որ պալատի մէջ գտնուած առնափուտները զանոնք կը պաշտպանեն: Ատ չէր բաւեր, Սելանիքի փոստայէն արժէքաւոր ծրարներ գողնալու խնդիրն ալ մէջ տեղին կաւ և Բալիչէն ատ վրասն ալ կը պահանջէ:

Ինչպէս կը տեսնէք ամէն կողմէն ստակ կուզեն. Թրանսա Միլիոններ կուզէ, Ռուսիա միլիոններ կուզէ, Աւստրիա կուզէ. բայց ո՞ր կէ գտնայ Սուլթանը:

Գետնաբազմական նախարարութեան ու Բ. Գրան բակերուն մէջ հարիւրաւոր տիկիներ, սպաներու և այլ պաշտօնեաներու կիներ նիհար, խուլցած, պատուտուած զգեստներով, կը ճւան, կուլան և ամսական կուլեն. տարիներով չի վճարուած ամսականներ: Գաւառներէն զինուորներ ու սպաններ 20-30 ամսական կուլ'ն, Մայրաքաղաքի մէջ, կայսերութեան ամէն անկիւններէն պաշտօնեաները «ամսական» կազաղակին: Այդ է ընդհանուր կոչը հազարաւոր անօթի կողորդներու:

Սուլթանը ուզէ չուզէ եւրոպացիներուն զանազան արտօնութիւններ պիտի տայ, որպէս զի քանի մը ոսկի իյնայ պետական գանձարանին մէջ:

Երբ լսուի մէջ պատահած վերջին դէպքերու մասին երիտասարդ թուրքերու Լոնտոնի մէջ հրատարակած «Էլ Խալիֆատ» թերթի մէջ հետեւեալը կը գրեն:

«Յուլիսի մօտերը ծովային նախարար Հասան փաշային և ներքին գործոց նախարար Մահմուտ փաշային երկու աղիկները, որոնք շատ կայացել էին Սուլթանի երրորդ կնոջը, կը հազոր-

դեն թէ՛ տիկինը զաղանի խորհրդակցութեան մէջ կը գտնուի պալատական ուրիշ կիներու հետ Սուլթանի գլխուն փորձանք մը բերելու, որովհետեւ Սուլթանը գէշ կը կառավարէ երկիրը, ուստի պէտք է զայն գահէն հրաժարեցնել:

Այդ ամէն մեղադրանքները տեղեկագրի մը մէջ ամփոփելով կը յանձնեն Սուլթանին: Փաշայի աղիկ մատնիչներուն պատմելովը, Սուլթանի տիկնոջ քովը ժողով պիտի ըլլայ եղբր յուլիոն 3ին կարեւոր որչափները տալու համար:

Նշանակեալ օրը, 11 կիներ կը հաւաքուին կայսերական հարէմի մէջ զուարճանալու համար, առանց ու է դաւադրական միտումներու: Վարագոյրներու ետեւը կը թագնուին Սուլթանը և իր սիրելիները: Կիները հազիւ փակին խօսակցիլ, երբ կը լսուի կատաղած ձայն մը, ոհմա արիւնդ պիտի թափեմ, ատոր իսկոյն կը հետեւի ատրճանակի պայթում մը, և Սուլթանի երրորդ կինը, մահացած գետին կիչնայ: Ուրիշ երեք կիներ կը վիրաւորուին, մէքանակ հանրը կը ձերբակալուի, միւս կիները պալատէն կը վախտուին և կամուսնացուին համիտեական սպաներու հետ:

Սուլթան անմեղ կիները սպանելէ, վիրաւորելէ վերջ, զրպարտիչ աղիկները թանկագին նէրտներով կը վարձատրէ:

ՄՍԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Եւրոպական թերթերու մէջ, մանաւանդ աւստրիական, զանազան կարծիքներ կը յայտնուին ներկայ Մակեդոնական բարձրագոյն կօմիթէի և Յարաֆօյի մասին. ոմանք կըսեն թէ արդէն Մակեդոնական գործիչները երկու մասի բաժնուած են, Սարաֆօյ այն կարծիքին է որ գործը պէտք է շարունակուի նախկին ուղղութեամբ, իսկ ներ-

կայ Կոմիտէն հակառակ է նախ- կին ուղղութեան և կողմ միայն գիտնալիս իրենց միջոցներով պիտի առաջ առնին: ոմանք ալ կրնան թէ ոչ մէկ բաժանում չը- կայ, ներկայ Կոմիտէն միայն առ երես ինքիքը իրաւունք կը հաշակէ, իսկ ի ներքուստ բոլորովին համաձայն է Սարափովի, և երկրին ներք գտնուած յափոխականներուն հետ:

Արիշ մաս մըն ալ կայ, որ ոչ Սարափովի համաձայն է և ոչ ալ ներկայ բարձրագոյն Կոմիտէին, ոչ մէկի ուղղութեանն ալ կը հաշակէ:

Ըստ երեւոյթին ոյսօր մակե- գոնական յեղափոխական տարրը ճիշդ այն դրութեան մէջ կը գտնուի, ինչ որ յայտնուած էր զանախն մեր յեղափոխականնե- րը: միտ թիւնական ալ կայ Սակե- գոնացիներուն մէջ, սակայն ա- սանց ձայնը գեա այնքան բարձր չի ելլար. շատ հասանական է որ երորդ անակիները, որոնք ոչ ներկայ Կոմիտէին բռնած յե- լծացքն կը հանդիսանայ միայն Սարափովի ուղղութեան, վազը չէ միայն որ միտ թեան պոչէն բըռ- նեն:

Այս ամէնը անյաշտութեան հետեւանքները են տարի մը ա- ռաջ նախկին Կոմիտէն Սարափո- վի հետ միտնին պաշտելի էին, երբ անյաշտութեանը վրայ եկան, նախկին Կոմիտէն իր հրա- պոյրը կորսնցուց, նորը ուրիշ ուղղութիւն մը բռնեց, իսկ դուրս մնացածները, արհամար- ուածները երեսն եկան թէ հի- նը և թէ նորը պարտաւելու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

25 տարի առաջ, երբ ես դեռ մա- նուկ և քաղաքական դպրոցի նա- խադարարատակամի ուղակերտ էի, նոյն դպրոցի երկրորդ հիմնական դասա- բանում գտնուում էր Վահէ անունով մի հայ պատանի: Վահէն ամէն օր պատմութիւն էր, ամիսը մի քանի ան- գամ արտաքսում և կրկին ընդուն- վում: Բայց ինչ էր անում Վահէն, մենք չէինք հասկանում, չէինք ըմ- բռնում: Միայն այսչափը գիտէինք որ նա չար էր, շատ չար: Գտնէ մեր մանկավարժները նրան այդ արտաքսն էին աւել լայն դրանից, անհի- կամալի տղայ էին կոչում:

Անհասկանալի Վահէն գրիթէ մտե- իմ ընկեր չեւեկը: և այդ ոչ թէ նրա համար, որ ոչ ոք չէր ուզում նրա հետ բարեկամանալ, այլ նրա համար որ ինքը միշտ իրան հետու էր պահում բոլոր աշակերտներին: Այն ժամանակ ես չէի հասկանում թէ ինչու Վահէն այդ դիրքն էր բռնել դէպի իր ընկե- րակիցները, սակայն վերջը, շատ վեր- ջը ըմբռնեցի, որ Վահէն մի անասի

Մեզի համար շատ ցաւալի է որ մեր Մակեդոնացի եղբայրնե- րու յեղափոխական տարրին մէջ ալ այդ պատահական սերմեր ա- ճեցան, ան ալ այնպիսի ժամա- նակի մէջ, երբ զժողով Մակե- գոնիան իր ամէն զաւակներուն օգնութեամբ պետքը կը կրկնէ:

Ինչպէս կերելի, ապստամ- բութեան պատրաստուող ժողովուրդներուն ճակատագիրն է նախ իրենց մէջը խզում թիւն- ներ հանել, ապա պատելով թշնամու գիւտաց ելլալ:

ԺՅՈՒՄ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐ

Յրանալի հոշակուտը եւ ազան- զատը ընկերվարական ժողովի վեր- ջին ժամանակներս բաւական խիստ քննադատութեան կ'ենթարկուի իր ընկերներու կողմէն: Ժողովը կը մե- զուցուի Յրանալի մէջ արդը ներ- կայ կայ գերուն համակրգրուն հա- մար:

Աստիճան յարձակումը անգի- տնե- ցաւ ընկերվարական Միւսովի նա- խարարութեան պաշտօնը ընդունե- լու պատճառաւ: Ընկերվարականնե- րու մէջ մար չէր ուզուի որ ընկեր- վարական Միւսովի Վարչախմբ Ռուս- սոյն նախարարութեան մէջ պաշտօն ընդունի, որովհետեւ Վարչախմբ Ռուս- սո ընկերվարական չէ: Ընկերվարա- կաններու բարկութիւնը Միւսովի գէտ աւելի սաստկացաւ, որովհետեւ նոյն նախարարութեան մէջ կը դրա- նուէր Կալիֆիէ զօրավարը, երբ մի յեղափոխականներուն կատաղի զս- պիւք ու միտպետական:

Այդ միջոցներուն ժողովը ջերմ պաշտպան հանդիսացաւ Միւսովի փաստաբանելով որ Միւսովի նա- խարար ըլլալով պիտի աշխատի ըն-

տրհամարանք ունէր դէպի բոլոր մա- նուկները և պատանիները: Վերջը հասկացայ նրա պող և անտարրեր նայումը որով նա մի ընդհանուր անխորհի էր գտնում ուսումնարանի բակի մէջ վաղվազ կամ խռնուած աշակերտներին:

Վահէն սարսափելի չար տղայի հոշակն էր վայելում ի հարկէ, և մենք, փոքրիկ նախապատրաստականներս, մի անասի սարսափ էինք զգում Վա- հէին հանդիպելիս: ուրուքը տեսած հա ի ձագի նման կուզէինք դալիս, երբ նա մեր կողքով անցնում էր, կամ թէ ճանապարհին մեր դիմացն էր դուրս գալիս:

Մի օր մի դէպք պատահեց ու իմ մանուկ դիմում Վահէի մասին կազմա- կերպով կարծիքը օղը ցնդեց, և ես սկսեցի Վահէին յարգել յարգել այն յարգանքով որով յարգում է թոյլ մանուկը իրեն օգնութեան հասնող ու յեղ բարի մարդին:

Դեկտեմբերի ցուրտ սառածանքից էր, ժամը ու թիւն, պոչուսակա չափ- կամ, անից դո րո եկայ և ճամբայ ընկայ դէպի դպրոց: զպրոցը մեր անից բաւական հետու էր գտնուում, և յետոյ ճանապարհն էլ դարի վեր

կերվարականներու ծրագրերը դո- ծաղրել կարելի հղածին չափ:

Ժողովի այդ պատահական հե- տեւանքները գեա անցած չէին, երբ ընկերվարականները խնդիր չէինցին ժողովի աղջկան գաստարակու- թիւնը: Ժողովին աղջիկը կաթովիկ կը կրկնուէր թեան սգով կը կրթուի, Ընկերվարականները կը յայտարար- րեն թէ ինչպէս ժողովը իր համո- զութեամբ հակառակ կրթութիւն մը կուտայ իր դուստրին, ինչպէս չի կրնար նոյն իսկ իր ասանք մէջ իր համոզումները գործադրել:

Ահա նոր խնդիր մըն է որ փրկու- ժողովը կարողանայ որ իր աղջիկը կրնայ սղգեցու թեան աակ կը կրթուի, իսկ կինը հաստացեալ մըն է:

Ահա Յրանալի նման երկրի մը մէջ անգամ, ժողովի պէս զօրեղ ու կա- թող մարդ մը իսկ չի կրնար իր տանը մէջ իր համոզումներուն համեմատ ապրել: Հոն իրեն հակառակորդը կինն է, իսկ դուրս ալ վիճքը կը պայտարակին իր համոզումներուն դա- ւաճանած ըլլալուն համար: Եթէ Յրանալի մէջ ժողովի նման մարդիկ, այդքան զժողովութեանն, ու կը հանդիպին, սկզբունքները գործ- նականի վերածելու մէջ, ուրեմն ինչ զժողովին արդեւներու կը հանդիպին աւելի ազէտ ժողովուրդներու լու- սամիտ զաւակները: Գուցէ ժողովի աւելի կատարած է հոգեւորականներու գէտ անոր համար որ, նոյն կը կրկնուի կրթութեանն և պատճառ որ ինք չի կրնար իր զաւակին իր ուզած կրթու- թիւնը տալ: կինը կը սակաւընէ:

էր ու սառած, վիզօ, ականջներս այն փաթեթի, որ աւքիս սառչը հազիւ էի տեսնում: Գարիկը բարձրանա- լիս, յանկարծ սոս սլքտացեա ես թրմ- լալէն մէջքիս վրայ փակեցի: Չար չարութիւն էի վեր կենալ: Բայց դըր- քերիս պարտաւել, կապած վիզը ու գլուխ խանգարում էին: Այդ շար- չարանքի մէջ էի, մէկ էլ տեսնեմ մէ- կը վազելով մտեցաւ ինձ և ձեռքս բռնելով վեր բարձրացրեց: Ինձ օգ- նողը Վահէն էր, բոլորովին լուրջ կերպարանքով, առանց այն ծագրա- կան ժպիտին որը այդ անասի պարա- գաներում յատուկ է լինում գեա- հասնելին:

— Պայտաւելք տուր ինձ, բեր վիզը ու ականջներդ պատեմ այդ փաթե- թոցից: Ինչ, ես հարիւր տարեկան կնիկայ նման փաթեթիկ: Թէ ցրտից ես վախում: Այդ բոլորը կատարե- լուց յետոյ, Վահէն ձեռքս բռնեց և մ'նք կուտայ կամաց դա' ոյ գնացինք: Այդ դէպքից յետոյ չար անհասկա- նայի Վահէին ինձ համար զարձաւ բարի և հասկանալի: Ես զանազան հնարներ էի մտա' ում Վահէի ինձ արած լա- ւութեան փոխարէն մի լաւութիւն ա- նել: Բայց չէր լինում: Երբեմն ուզում էի իմ նախածախց նրան բաժնի տալ բայց նա չէր ընդունում: Եղու փոքր ես կեր որ մեծան' սչ ասում էր նա ինձ, կարծես ինքը ինձնից շատ մեծ լինէր:

ՅԵՒԱԲՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՈՎԱՍՏԱՆԻ Մ Է Ջ

Վերջին ժամանակներս յեղա- փոխական շարժումները մեծ ծա- ւալ կտանան Պարսկաստանի մէջ: Գլխաւոր պատճառը պարսից կա- ռավարութեան Ռուսիոյ հետ ու- նեցած, քաղաքացիութեանը եւն փոխառութեան մասին:

Պատարութիւնը ստիպուել է թէ հրանը իր շրջականերով մի- տան, պաշարման վիճակի մէջ գնել: կը ենթադրուի թէ յե- ղափոխական շարժումներու պը- լաւար վարիչները շահին մտտիկ անձերը են, որովհետեւ շահը շարունակ իր սեղանին վրայ պատանական նուտակներ և շրջա- բերականներ էր գտնուի:

Այդ շարժումը մասնաւորապէս մեծ վէճերին դէմ ուղղուած է, զոր կը մեղադրեն թէ քարենու- րոգումներու մասին սոսա լուրեր կը տարածէ սրպակի իր գրպա- նը լեցնել, Եւհը հրամանագրով մը ժողովրդէն կը պահանջէ յե- ղափոխական շարժումներու վա- րիչները կառավարութեան յանձ- նել: իսկ մեծ վէճերը 5000 թու- ման է խոստացած ալէն մէկ վա- րիչը յանձնագիր: Այդ պատճա- ռով Պարսկաստանի մէջ ալ սկսած է լրտեսութիւնը տարածուիլ:

Գարնան սկիզբները Վահէին դըր- րոցից բարրովին արտաքսեցին: Ար- տաքսուելու պատճառը այն էր, որ նա իր չը սիրած մի ուսուցչի ական- ջին թաց ձի նախնական դարկել էր: Վահէն զպրոցից դո րո եկաւ, դար- ձաւ օղորտախալի լոթի մասու մի շրջանի մէջ որ աշակերտական միջա- վայրից շատ տարբեր և շատ հեռու է:

Այնուհետեւ ես վահէին միայն փո- ղացում էի հանդիպում, այն էլ ոչ մի- նակ: նա իր սեւ չուխաւոր օլթիի ընկերներ ի հետ էր միշտ ման գալիս, հանդիպած միջոցին ստում էր:

— Ի՞նչ պատելի, տես ձմեռը կրկին վար չընկնես, ու ժողովում էր:

Երբեմն ես ուզում էի մտեցնալ և և նրան ասել:

— Վահէ, ինչու լոթի դարձար ա- մօթ չէ քեզ: հայրս, մեր անեղները ամբողջ քաղ' քի մեծ ու պատուաւոր մարդիկը ստում են որ լոթիքը լաւ մարդիկ չեն: Դու ինչու լոթի դար- ձար:

Բայց վերջն էլ մտածում էի որ յան- կարծ կը բարկանայ ու ինձ մի լաւ կը ծեծի և լուում էի:

Այդ պէս էլ մնաց: ոչինչ չտեսցի Վահէին: մի տարուց յետոյ էլ իմ ծը- նընդամարտից հետոյց և ուրիշ անեղ դնացի սովորելու, ու Վահէն բոլորու- վին անհետացաւ իմ յիշողութիւնից: (Եւրոպական)

ՎԵՐՋԻՆ ԶԱԲԱՐ
(ՅԱԿԵԼՈՒԿՍ ԳՐՈՅԱԿԻ ԹԻԻ 6)

Մուշ-Սասունեան խոսվայրյոց ար-
բերը, ստորաձևած արդէն եւրոպա-
կան շրջաններում, զուգորդակցին
քաղաքակրթական երկրէ անցքե-
րի, կատարած միմիայնից անկախ,
չոկ-չոկ երկրներում, յօգուա Հայ-
կական բարենորոգումների իրագործ-
ման:

Դրանք են.

- 1) Պաշտօնական Համաժողովի ու-
րույնը,
 - 2) Միացեալ նահանգների նախա-
ձեռնութիւնը,
 - 3) Դիմումն Պրանսիական արտաքին
գործերի նախարարին.
- Ոչ համարելով «ԴՐՕՇԱՆ»ի տա-
լիկայ համարին սպասելը, շտապում
ենք հայ հասարակութեան հարգելի
վերջի շարքում այդ անցքերի հա-
մառօտութիւնը՝ իրիւ Յաւելում օ-
գոտտարի համարի: Մանրամասները
ապագային:

I. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ X. ԲԴ.
ՀԱՄԱԺՈՂՎԻ ՈՒՇՈ ՍԵ

Միջազգային Պաշտօնական Հա-
մաժողովը, գումարած սեպտեմբերի
10-13ին Անգլիայի Փրազով քաղա-
քում, իր երկրորդ օրուայ նիստը նւ-
րեց Հայկական Հարցին: Բացի Բէր-
նի Միջազգային Բիւրօյի գլխու միջ,
Համաժողովին ներկայացուցեց Փրանսի-
ական լիզով տպած մի զեկուցագիր՝
Հայաստանի վիճակի վերաբերմամբ:
Երկար վիճարանութիւններից յետոյ,
որոնց մասնակցում էին Հայեր ուսու-
ներ, Փրանսիացիներ և անգլիացի
միսսիօնարներ, Համաժողովը ընդու-
նեց հետեւեալ որոշումը.

«Պաշտօնական 10րդ. Համաշ-
խարհային ժողովը, գումարած Փրա-
զովում 190 թւի սեպտեմբերին, սե-
ղեկանալով Բէրնի Միջազգային խա-
ղաղութեան միայն ընթացի գեկուց-
ման, միջառակազրի հայերի ներկայ
վիճակի մասին թիւրքիայում ներ-
կայացած հայ հրապարակախօս Պ Հ.
Առաքելեանի միջոցով, և մի նամակի
Միացեալ Նահանգների խաղաղութեան
ընկերութիւնների կողմից.

«Նկատելով, որ հայ ժողովրդի
տխուր դրութիւնը բնաւ չէ բարելա-
ւուել, որ կոտորածները խժգո-
թիւնները շարունակուում են Հայաս-
տանում, որ Բէրլինի դաշնագիրը
ստորագրող եւրոպական պետութիւն-
ները ոչ մի հաւաքական ջանք չեն
արել վերջ դնելու այս դժբաղդ քրիս-
տոնեայ ազգի վերաբերմամբ սխառէմ-
ախբարար կատարող անդժութիւն-
ներին, —

Վճռում է՝
«Ուղարկել Բերլինի դաշնագիրը
ստորագրող եւրոպական պետութիւն-
ներին մի խնդրագիր, որպէսզի նրանք
մի պաշտօնական կօնֆերանս գումար-
ներն վճարու համար հայկական հար-
ցը գործադրելով 1895ի մայիսի բա-
րենդումների ծրագիրը, որ մշակել
են անգլիական, Փրանսիական ու
ուսական կառավարութիւնները և
ընդունել է նոյնիսկ Սուլթանի կող-
մից»:

II ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՆԸ

Սեպտեմբերի 10ին Փրազովի համա-
ժողովը ստացաւ մի նոսազիր, որով
հարցում էր թէ «Միացեալ Նահանգ-
ների խաղաղութեան ընկերութիւնն
ըն մի ուղերձ են ստորագրել տայիս
ամերիկեան ժողովրդին, ուղղած Միաց-
եալ Նահանգների նախագահին, որպէս-
զի վերջինս միջնորդէ եւրոպական
պետութիւններին առաջ կօնֆերանս
գումարելու հայկական հարցը լուծելու
նպատակով: Հարցը ելով այդ, Ա-
մերիկայի խաղաղութեան ընկերու-
թիւնները խնդրում են Պաշտօնական
Համաժողովից՝ ուժ տալ իրենց ձեռ-
նարկին: Համաժողովի որոշումը, որ-
վերեւ բերեցինք, պարզ ապացոյց է,
որ խաղաղութեան ժողովը կատարելա-
պէս կողմնակից հանդիսացաւ այդ գե-
ղեցիկ առաջարկին:

III. ԳԻՄՈՒՄ ՓՐԱՆՍԻԱԿԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆ

Պարիզի Temps լրագրի սեպտ. 14-ի
համարում ի միջի այլոց տպագրուած է.
«Փրանսիական արտաքին գործերի
նախարար Պ. Դելկասէ այսօր ընդու-
նեց «Pro Armenia» խմբագրակա-
ն Պ. Պիւս Բիւսին, որ նրան յանձ-
նեց minimum քվորումների մի ծրագիր.
Թիւրքաց Հայաստանի համար. կազմ-
ված Դրօշակեան Գործող կուսակցու-
թեան ձեռքով:

«ԴՐՕՇԱՆ»ի խմբագրութիւնը՝ առ-
պատէ համարելով իր կողմից ա-
ւելցնել սրբէ մանրամասներ, բաւա-
կանանում է վաւերացնելով վերեւ լու-
րը:

ՀԱՅ ԳԱՂՁԱՎԱՅՐԵՐԸ

Ի՞նչ գրութեան մէջ կը գտնու-
ւին հայ գաղթավայրերը, արդ-
եօք ժամանակը որ՞չափ աղիւծ
է ատոնց վրայ, որ՞չափ անոնք
կզգան իրենց մայր երկրին
պէտքերը, ներկայ ժամանակին
պահանջները և որչափ կատա-
րեցին ու կը կատարեն իրենց
ազգային պարտականութիւննե-
րը: Յիշաբար մտածելով հարցեր,
որոնց մասին կուզենք քիչ մը
համառօտ կերպով խօսիլ:

Այդ գաղթավայրերէն ամենէն
հարուստը եգիպտոսի հայ գաղ-
թականութիւնն է: Սակայն ի՞նչ
կընէ եգիպտոսի հայութիւնը,
չը նայած որ իրենց ազգային
պետերը փաշաներ և պիւր են
ու «փաստաւոր» կերպով կրնան
ազգը օտարներուն առեւ ներ-
կայացնել. ինչպէս կընէ եգիպ-
տահայ իրերթ մը:

Դոյրացները յաջող վիճակի
մէջ չեն գտնուիր, ազգային կա-
լուածքները կանոնաւոր կերպով
չեն շահագործուիր, ազգային
սե է խնդիրն մը ջերմեռանդօ-
րէն փակած չեն. երկու թեր-
թեր ունին. ի՞նչ կուզեն ընել,
ի՞նչ գաղափարի կը հետեւին,

ի՞նչ ծրագրով մէջտեղ ելած են.
Բան մը չի հասկցուիր: Է՞ ինչ
կրնանք հասկնալ թերթէ մը,
որուն կարեւոր էջերը կը բռնեն
Պօլոս վաշային պալօի նկարագ-
րութիւնը և առ օրը արուած կե-
րակութիւններուն ցանկը:

Ու առ պալօն և կերակուրի
ցանկն ալ, հայ փառքի պատկ-
ներէն մին կընդունուի հայ թեր-
թին կողմէն: Պօլոս թերթերն
անգամ, գրաքննիչի բռնութեանը
տակ սեղմուելով, այդ աստիճա-
նի սրկութեան, զէվէկութեան
հասած չին:

Եգիպտոս թէեւ անգլիական
իշխանութեան տակ է, բայց
այնտեղի հայերուն մեծ ժաւը,
ինչպէս կերեւի, գեռ ամբողջո-
վին թրքական բարքերու գերին
է. վսեմափայլը, մեծաշուրը,
էֆէնտին, ազնուպարմը դեռ
հոն մեծ դեր կը կատարեն.
Գեռ անոնց փէշերը լիզողներուն
վահմակը շատ մեծ կերեւի:

Ամերիկայի մէջ, Պոլկարիոյ
մէջ, Պարսկաստանի մէջ որոշ
դոյնի երիտասարդութիւն մը
երեւան եկաւ, որոշ գործեր կե-
տարեց, որոշ գաղափարի մը
հետեւեցաւ, ճիգեր թափեց
Հայութեան էֆէնտիութեան, ա-
զգային կեանքի զեկը. միայն
եգիպտոս է որ չը կրցաւ այդ-
պիտի երիտասարդութիւն մը
մէջտեղ հանել. վախճանակ յա-
ռաջագիմնու, կարծես աւելի յե-
տադիմեց: Եւ այդ ամենուն
պատճառը եգիպտոսին անդոյն,
անորոշ, թոյլ և փէշեր լիզող
հայ մամուլն է:

Եգիպտոսի մէջ հայ լրագրու-
թիւնը մեծ դեր կընար կատա-
րել, եթէ ան իր կողմանը բարձ-
րութեանը վրայ գտնուէր, եթէ
եգիպտահայութեան ազգային
խնդիրները շտապօրէն քննէր:
Մինչեւ հիմա այդպէս չէ եղած
ցանկութիւն է որ այսուհետեւ ըլլայ:

ՈՒՇԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ծարաթներէ ի վեր Պրանսա-
յի ժողովուրդը և կառավարու-
թիւնը սրտատրոփ կը սպասէին
Չարին գալտեանը. Հանրապե-
տական կառավարութիւնը, միա-
պիտեանը գլխատող, արքայալ-
ցեղերը ելկրէն դուրս վաճառող
Պրանսացի ժողովուրդը խելայեղ
խանդավառութիւնով մը սպա-
սեց և գիմարեց Չարին: Եւ
այդ ամէնը ինչու համար, որով-
հետեւ նիքօլա երկրորդ աշխար-
հիս ամենէն զօրեղ միապետն է.
որովհետեւ Պրանսա անոր աջակ-
ցութեանը պէտքը կզգայ վառան-
գաւոր վայրկեաններու մէջ: Ու-
ժին առջեւ, զօրութեան առջեւ,
գործնականին դրականին առջեւ

կը խանարհի ապատութեան հա-
մար էն մեծ զոհարարութիւննե-
րը ընող Պրանսան:

Ի հարկէ նիքօլա երկրորդը
չէ մեղաւորը որ ինք մեծ ժո-
ղովուրդի մը միապետն է. և
նիքօլա Բ.ը չէ որ հակասութեան
մէջ կիյնայ Պրանսան այցելե-
լով: Բայց Պրանսան արգեօք
հակասութեան մէջ կիյնայ:

Գերմանիա այնպէս ջախջա-
խեց Պրանսան, անանկ դետնին
ոնզմեց, որ թշուառ երկրին
տասնեակ տարիներ, հսկայական
աներեւակայի ճիգեր ու ջան-
քեր պէտք եղան նորէն վերա-
կանգնելու, նորէն մեծ ժողո-
վուրդներուն մէջ իրեն յարմար
ու վայելուչ գիրքին հասնելու
համար:

Պրանսիային ամենէն առաջ
հայրենասէր ու վրէժխնդիր ժո-
ղովուրդ մը կը ներկայացնէ:
Այդ ժողովրդին ազգային պատ-
ւասիրութիւնը Պրանսիա ոտքի
տակ տաւ, անոր հայրենասի-
րական զգացմունքներուն ստր-
սափելի խոր վէրք մը հասցուց,
անոր սրտին մէջ վրէժխնդրու-
թեան այնպիտի զօրեղ զգաց-
մունք մը ծնեցուց, որ Պրանսա
ամէն ուրիշ զգացմունք մտնցաւ,
և իր ամբողջ միտքն ու կորովը
կեղրոնացուց իր ուժերը ամփո-
փելու. վաղեմի զօրութիւնը վե-
րստանալով գործին վրայ:

Դրամով աղքատ, Եւրոպայի
մէջ Գերմանիոյ գերակշռութեան
վախցող Բուսիա Պրանսայի պէս
հարուստ երկրի մը հետ, առանց
ո և է զոհարարութեան բարեկամա-
նալու միջոցը գտաւ ու բարեկա-
մացաւ:

Պրանսա սիրով ընդունեց իր
փառաւոր կայսրը խորտակող
ձեռքը, որ հիմա բարեկամական
զգացմունքներով կերկնայ գէպի
իրեն. Ու այսօր, Պրանսա ինք-
զինքը մրնակ չի զգար Գերմա-
նիոյ հանդէպ, եթէ գաշնակից
մը չունի գոնէ չէպարացնող դե-
րը կատարող բարեկամ մը ունի
եւ առ հիմակ ու հիմա Պրանսա-
յի կը բաւէ:

Իսկ թէ որչափ երկար պիտի
տեւէ այդ երկու հակասեայ
պետութիւններու և ժողովուրդ-
ներու բարեկամութիւնը, առ ալ
ապագայ պիտի պարզէ:

ՍԶԴ

Մեր չի վճարող բաժանորդնե-
րէն կը խնդրենք շտապէն բաժ-
նեցիկները չըկել, որպէս զի
մենք ստիպուած չըլլանք ամէն-
քըն ալ մէկիկ մէկիկ խայտառա-
կել հրապարակաւ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Փիւնիկ» կը հաղորդէ թէ՛ գերասանապետ Թ. Փասուլաճեան ամսէ մը աւելի է որ կը տառապի չարաչար Ալէքսանտրիոյ Գերմանահան հիւանդանոցին մէջ և վերջին օրերս բարձրորակ ուժասպառ եղած . ալ յոյս մը չի ներշնչեր :

— Ժամարեան հղբայրները Պէրպէրեան վարժարանի յորբեւանի տակ թիւ 500 Քր. նուիրեր են յորբեւանի յանձնաժողովին :

— Պոլսոյ մէջ լուր տարածուեր է թէ՛ Ռուսիոյ և Եգիպտոսի ալգալիները 50,000 Քրանքի չափ նուիրեր են Մխիթարեան հաստատութեան երկրորդ տարեգարձի առթիւ :

— Բարիկի և ուրիշ օտար հաճախարաններ նոյնպէս և Հոռոմի պայքը շնորհատրական հեռագիրներ զրկած են Վեներիկի Մխիթարեաններուն , յորբեւանի առթիւ :

— Վիէնայի Մխիթարեան միաբանութիւնն վայելուչ հանգէսներ կատարեր ի Մխիթարեան յորբեւանի առթիւ :

— Պոլսոյ անգղիական դեսպանատան մատուրն մէջ , հոգեհանգիստ կատարուեր է Մակ-Քինլիին համար : Պատրիարքին կողմէն ներկայ գտնուեր են Գիմաքսան եպիսկոպոսը և Բարկէն վարդապետը :

— Կովկասի զանազան քաղաքներու մէջ ի պատիւ Մխիթարեան յորբեւանի ներկայացումներ տրուեր են :

— Պատրիարքը իւր հանած պալարին պատճառովը՝ տակաին իր բնակարանէն դուրս չը ելլար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պոլսէն թուրք գնդապետ մը ու զեւորուեր է Բարիկ մանակցելու Պրանսական մեծ զօրահանգէսին , սակայն ստիպուեր է Վիէնայ կանգ առնել , որովհետեւ Պրանսական կառավարութիւնը թուրքիս յայտարարած է թէ թուրք զինուորական պատգամաւորը Պրանսա չի պիտի ընդունի :

— Սելանիքէն կը կհաղորդեն որ երկու հազար թուրք զինուորներ շրջապատեր են Միսս էլէնը փախցնող աւազակները և զայն սզատելու համար բանակցութեան մէջ մտած են :

— Ռուսական «նովոյէ Վրէմէա» թերթը կը հաղորդէ որ վերջերս Պոլսոյ մէջ կրկին մեծ

քանակութեամբ հայեր կը ձերբակալեն , որովհետեւ իր թէ հայկական դատաբանութիւն մը կայ եղեր Սուլթանի պալատը տինամիթով օգը հանելու համար : ? ?

— Էնտէրանտան Պէլժի Պոլսոյ թղթակիցը Էրզրումի Մուշի գէպքերու մասին հետեւեալ բացատրութիւնը կը հաղորդէ :

Անցեալները Էրզրումի գիւղերէն միոյն մէջ հայուհի մը կառուանգուի : Իշխանութիւնը այդ աղջիկը կազատէ և ողջ ու առողջ կը վերադարձնէ իւրաներուն : Բարձրագոյն Գեան հրամանի համաձայն աղջիկը փախցնողները խտաի պիտի պատժուին : Իսկ Մուշի գէպքերը կը բացատրուին Շէրիֆ և Խալիլ աղաներու սպանումովը հայերու կողմէն :

— Ռուս դեսպանը անցեալ տարեթիւ Սուլթանի հետ տեսակցեր է և կրկին Հին Սերպիոյ մասին խօսակցութիւն ունեցեր է :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Գերմանական կառավարութիւնը անօգուտ կը համարէ անիշխանականներուն դէմ կռուելու համար նոր համաժողով մը գումարելը :

Գերման աստիկանութիւնը ինքզինքը բարձրորակ պատրաստ կզգայ անիշխանական գործողութիւնները արգիլելու :

Միջազգային տեսակէտով Գերմանիա արդէն առած է Պէլժիգայի , Լիւքսեմպուրկի , Պրաղիլիոյ Եուէտի , Սպանիայի և ուրիշ քանի մը պետութիւններու համաձայնութիւնը որոնք ընդունած են թէ վեհապետներու դէմ սպանութեան փորձ ընողները իբր քաղաքական ոճրագործ չի պիտի ճանչցուին :

Գերմանիա կը յուսայ որ Մակ Քինլիի սպանութենէն յետոյ Անգլիա և Զուիցերիա ալ պիտի դադարին անիշխանականները հիւրընկալելէ :

— Վիէնայի Գերմանական զօրահանգէսէն դժգոհ մնացեր է մանաւանդ հեծելազօրքէն , որ կայսեր կարծիքով գէպի անկում կը դիմէ :

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Օտէսայէն թայմը լրագրին կը հաղորդեն թէ՛ Բիթերսպուրկի ուսանողներէն որոնք զօրքերու մէջ տեղադրուած էին , 28 հոգի համախարան վերադարձուեր են :

Ս Պ Ա Ն Ի Ս

Սպանիոյ կառավարութիւնն ալ միջոցներ ձեռք կառնէ կրօնական ընկերակցութիւնները «եղմելու» :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պօէրները կրկին սկսան անգլիացիներուն մեծ վնասներ հասցնել : Քիչնէրի սպառնական յայտարարութիւնը փոխանակ պօէրները զսպելու , ընդհակառակը անոնց քաջութիւնը աւելի բորբոքեց : Պատերազմի պայմանները այսօր անգլիացիներուն համար նոյնքան կը դժուարանան որչափ ոկտուած ատենն էր :

— Պօթա զօրավարը սկսեր է նախալ արշաւել : Էլանտորի վերջի մէջ գրաւեր է երեք թընդանօթ , գերի բռներ է 150 անգլիացի , 18 անգլիացի սպաններ են , ու 20 ալ վիրասորուեր :

— Բրէթօրիայէն կը հեռագրեն թէ՛ երեք հազար պօէր դերիներ Հնդկաստան զրկուեր են :

— Անգլիական երեք գումարտակներ պօէրներու կողմէն լարուած թակարդի մը մէջ ինկեր են :

— Բրէթօրիայէն կը հեռագրեն թէ պօէրները յարձակեր են Քոմիթուօրի վրայ :

— Երկու Քրանսացիները , որոնք անգլիական կառավարութեան կողմէն իբր լրտեսներ ձերբակալուած էին՝ երաշխարութեամբ ազատ արձակուեր են :

Ա Ն Գ Լ Ի Ս

Անգլիական «Տէյլ-Մէյլ» լրագրիւր իր թղթակիցները զրկած էր Գերմանիա և Պրանսա զօրահանգէսներուն ներկայ ըլլալու համար : Այդ թղթակիցներուն տուած տեղեկութեանց համեմատ երկու պետութեանց զօրքերն ալ շատ պակասութիւններ ունին և հարաւային Ափրիկեան պատերազմին մէջ , անգլիացիներէն գէշ պիտի կատարէին իրենց պարը :

Պ Ա Ր Ս Վ Ա Ս Ս Ա Ն

Պրիքսէլի պարսկական հիւպատոսարանը կը հերքէ եւրոպական թերթերու մէջ տարածուած լուրերը Պարսկաստանի յեղափոխական շարժումներու մասին :

Կը յայտարարէ որ խաղաղութիւնը ամենեւին խանգարուած չէ :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Շանկայէն «Բարի նուզէլի» կը հաղորդեն թէ չինական կայսրուհին ընդհանուր կրթութեան կարեւոր հրովարտակ մը տուեր է : Այդ հրովարտակին համեմատ ամէն մէկ նահանգին մէջ տեսակ տեսակ կանոնաւոր դպրոցներ պիտի բացուին :

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Չիքաօէն Լօնտոն կը հեռագրեն թէ՛ ձերբակալուած ամէն անիշխանականները ազատ արձակուած են , որովհետեւ անոնց մասնակցութեան փաստեր չեն գտնուած :

Մ Օ Ն Թ Է Ն Է Կ Ի Ր Օ

Իշխանական շրգենաւակը , Շիտորեան լիճին մէջ , թուրք Ստէրպէզ գիւղին քովէն անցած միջոցին 20 հոգիի չափ դարան մտած թուրքեր քանի մը անգամ հրացան արձակեր են շրգենաւին վրայ :

Դարատաղի կառավարութիւնը խտաի բողոքեր է այդ անկարգութեան դէմ :

Ն Ի Ր Ո Պ Ա Յ Ի Զ Ա Յ Ո Ւ Ս Մ Ի Ո Ւ Թ Ի Ն

Եւրոպայի Հայ Ուս. Միութեան նամակ ուղարկելու և առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է գրմել հետեւեալ հասցեով
Իւնիոն sk Զ'էդիտիան Արմ.
Լ'հօրք րիւ սը Լ'էֆօլ սը Շիլի 2

Սուրս Ժընէվ
Կարգողիւ Յաննաճոյով

Խ Մ Ա Ս Վ Ր Ո Ւ Թ Ի Ն « Ն Ա Ր Ժ Ո Ւ Մ » Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս , հասցէտոմս , նամակագրութիւն , հարսանեկան հրաւիրագիր , մահազգ :

Գինները յոյժ գիւրամտացելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒԻՂ

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна